



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**№ ԱԽ-4-Ո-4
2015թ.**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ**

նախագահությամբ՝

Ն.Նարիմանյանի,

***մասնակցությամբ՝
ԱԽ անդամներ***

*Լ.Ասրյանի, Մ.Ավանեսյանի, Մ.Արզումանյանի,
Գ.Գրիգորյանի, Ա.Լազարյանի, Հ.Խաչատրյանի,
Կ.Սաղյանի, Մ.Սաֆարյանի, Մ.Ստեփանյանի*

***ԼՂՀ դատավորների ընդհանուր ժողովի
Էթիկայի և կարգապահական հարցերի
հանձնաժողովի անդամ***

Ռ. Ջհանգիրյանի,

դատավոր

Կ. Մելքումյանի,

քարտուղարությամբ՝

Ս.Ավետիսյանի

2015 թվականի սեպտեմբերի 28-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նստավայրում, դռնբաց նիստում, քննարկելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Կարեն Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.

ԼՂՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի /այսուհետ՝ նաև Հանձնաժողով/ 2015թ. օգոստոսի 11-ի N°ԷԿ-1-04/15թ. որոշմամբ Դատարանի դատավոր Կարեն Մելքումյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Դատարանի նախագահ Ա.Թադևոսյանի 2015թ. հուլիսի 24-ի գործի քննության ժամկետների խախտման վերաբերյալ եզրակացությունը՝ հասցեագրված Հանձնաժողովի նախագահ Ա.Աբրահամյանին :

2. Կարգապահական խախտման վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը.

Հանձնաժողովը ԼՂՀ արդարադատության խորհրդին /այսուհետ նաև՝ Արդարադատության խորհուրդ/ ներկայացրել է միջնորդություն՝ Դատարանի դատավոր Կ.Մելքումյանին արդարադատություն իրականացնելիս դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ, վարքագծի կանոնների պարբերաբար խախտումներ թույլ տալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին: Նշված միջնորդությունը կցվել է դատավոր Կ.Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը:

Ըստ եզրակացության՝

<<Դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս թույլ են տրվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ, վարքագծի կանոնների պարբերաբար խախտումներ, որոնցում առկա է դատավորի մեղքը:

Այսպես.

1. ԸԻԴ 1471/02/2014թ. քաղաքացիական գործով՝ 2014թ. օգոստոսի 11-ին Դատարան է մուտքագրվել <<Արցախբանկ>> ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Ալբերտ Գեորգիի Արգումանյանի՝ 12.986,02 ԱՄՆ դոլար՝ որպես վարկային պայմանագրից ծագած պարտավորության գումար, ինչպես նաև 2014թ. օգոստոսի 11-ից մինչև պարտավորության դադարման օրը պայմանագրով նախատեսված տոկոսներն ու տույժերը բռնագանձելու և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին: Հայցադիմումն ընդունվել է վարույթ և դատաքննության նշանակվել 08.10.2014թ.: 19.08.2014թ-ին դատական նիստի վայրի և ժամի մասին ծանուցագիր է ուղարկվել կողմերին և հետադարձ ծանուցման անդորրագրով հաստատվել է, որ պատասխանողը պատշաճ ծանուցվել էր դատական նիստի վայրի և ժամի մասին 25.08.2014թ-ին /գործ թերթ 23-25/: 2014թ. հոկտեմբերի 8-ին ժամը 15:00-ին նշանակված դատական նիստին կողմերը չեն ներկայացել և կողմերի չներկայանալու հիմքով նիստը հետաձգվել և նշանակվել է 26.11.14թ.: 26.11.2014թ-ին նշանակված դատական նիստին հայցվորի ներկայացուցիչը ներկայացել է, պատասխանողը չի

ներկայացել, առ 08.10.2014թ. ծանուցագրով և ծանուցագրի ստացման մասին հետադարձ ծանուցման անդորրագրով /գործ թերթ 28,29/ հաստատվել է, որ 13.10.2014թ. պատասխանողը ստացել է 26.11.2014թ. նշանակված դատական նիստի վայրի և ժամի մասին պատշաճ ծանուցումը: 26.11.2014թ-ի դատական նիստում հայցվորի ներկայացուցիչը կարծիք է հայտնել պատասխանողի բացակայությամբ գործի քննությունը շարունակելու վերաբերյալ: Լսելով կողմի կարծիքը՝ Դատարանը որոշել է գործի քննությունը հետաձգել պատասխանողի ներկայությունը ապահովելու նպատակով: Նիստը հետաձգվել և նշանակվել է 13.01.15թ.: Նիստին ոչ ոք չի ներկայացել, գործի քննությունն ավարտվել է, իսկ վճիռը՝ հրապարակվել 15.01.15թ.:

Գործերի քննության ժամանակ գործող ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար, իսկ 110-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե՝ այն չի կարող քննվել տվյալ նիստում, մասնավորապես՝ գործին մասնակցող անձանցից որևէ մեկի, վկաների, փորձագետների, թարգմանիչների բացակայության պատճառով: Վերոնշված նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ գործին մասնակցող անձի չներկայանալու հիմքով գործի քննության հետաձգման օբյեկտիվ պատճառ կարող է հանդիսանալ վերջինիս դատական նիստի վայրի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցված չլինելը կամ դատարանի կողմից հարգելի ճանաչված պատճառով դատական նիստին չներկայանալը և ներկայանալու ցանկության առկայությունը, որը կարող է իրականացվել գործին մասնակցող անձի կողմից գործի քննությունը հետաձգելու միջնորդություն ներկայացնելով և դատարանի կողմից այդ միջնորդության բավարարմամբ, իսկ առանց հարգելի պատճառների դատական նիստի վայրի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցված գործին մասնակցող անձի չներկայանալը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն արգելք չի հանդիսանում գործի քննության համար, հետևաբար այդ պարագայում գործի քննության հետաձգումը հանգեցնում է գործի քննության անհարկի ձգձգմանը:

Հանձնաժողովը արձանագրում է, որ 08.10.2014թ. դատական նիստում գործը կարող էր քննվել և ավարտվել, սակայն այն երկու անգամ անընդմեջ, ընդամենը 2 ամիս 5 օր ժամկետով անհիմն ձգձգվել էր, ինչը պայմանավորված է դատավոր Կ.Մելքունյանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հանգամանքով:

Ինչ վերաբերում է դատավոր Կ.Մելքունյանի բացատրությանը հայցվորի կողմից պահանջը հաստատող փաստաթղթերի բնօրինակների և պատասխանողի կողմից պահանջը հերքող տեղեկությունների ներկայացման անհրաժեշտությամբ պայմանավորված գործի քննության հետաձգմանը, Հանձնաժողովն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք, իսկ

վերջիններս նշված ապացույցները ներկայացնելու միջնորդություն չեն ներկայացրել, և Դատարանի կողմից այդպիսի միջնորդություն չի քննարկվել, Դատարանի կողմից այդպիսի ապացույցներ չեն պահանջվել, իսկ դատական նիստերի արձանագրությունների համաձայն գործի քննությունը հետաձգվել էր ոչ թե ապացույց ներկայացնելու անհրաժեշտությամբ, այլ կողմի /երի/ ներկայության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված:

2. ԸԻԴ 1404/02/2014թ. քաղաքացիական գործով՝ 2014թ. օգոստոսի 01-ին Դատարան է մուտքագրվել <<ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Անուշավան Մուրադի Գևորգյանի՝ 313.711,80 ՀՀ դրամ՝ որպես վարկային պայմանագրից առաջացած պարտավորության գումար, ինչպես նաև 20.06.2014թ. մինչև պարտավորության դադարման օրը պայմանագրով նախատեսված տոկոսներն ու տույժերը բռնագանձելու պահանջի մասին: Հայցադիմումն ընդունվել է վարույթ, հարուցվել է քաղաքացիական գործ և դատաքննության է նշանակվել 06.10.2014թ.: Նիստին ոչ ոք չի ներկայացել, իսկ 04.09.2014թ. Դատարան է մուտքագրվել պատասխանողին ուղարկված ծանուցագիրը, և ծրարի վրա առկա գրառումից երևում է, որ պատասխանողը տեղում չլինելու պատճառով նամակը հետ է ուղարկվել /գործ թերթ 15-17/: 08.09.2014թ. Դատարանը հայցվորին գրություն է ուղարկել՝ խնդրելով ներկայացնել պատասխանողի ճշտված հասցեի վերաբերյալ տեղեկություն: 06.10.2014թ. Դատարանը ստացել է հայցվորի գրությունը, որի համաձայն հայցվորի հասցեն անհնար է ճշտել: Գործին մասնակցող անձանց ներկայությունը ապահովելու նպատակով 06.10.2014թ. նշանակված դատական նիստը հետաձգվել է և նշանակվել է 26.11.14թ.: 07.10.2014թ. Դատարանը կրկին պատասխանողի ծանուցագիրը ուղարկել է նույն հասցեով և այն կրկին հետ է վերադարձվել՝ պատասխանողի տեղում չլինելու պատճառով /գործ թերթ 25-27/: Նիստին ոչ-ոք չի ներկայացել, նիստը հետաձգվել է և նշանակվել է 2015թ. հունվարի 22-ին: 28.11.2014թ-ին Դատարանը պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին ուղարկել է ծանուցումը՝ պահանջելով ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ուղարկել Դատարան /գործ թերթ 30/: 25.12.2014թ. Դատարանը ստացել է պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի գրությունը, որի համաձայն՝ պատասխանողը օգոստոս ամսից բացակայում է: 22.01.2015թ. դատական նիստին ոչ-ոք չի ներկայացել, նիստը հետաձգվել է և նշանակվել է 12.03.15թ.: 22.01.2015թ. Դատարանը կրկին պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին ուղարկել է ծանուցումը՝ պահանջելով ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ուղարկել Դատարան: 10.03.2015թ. Դատարանը ստացել է հետադարձ ծանուցման անդորրագիրը՝ համայնքի ղեկավարի կողմից ծանուցումը ստանալու վերաբերյալ: 12.03.2015թ դատական նիստին ոչ-ոք չի ներկայացել, գործի քննությունն ավարտվել է և վճիռը հրապարակվել 27.03.15թ.:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողի փաստացի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում դատարանը գործը քննում է պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի տնօրինության կողմից ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ստանալուց հետո:

Վերոնշված նորմից ակնհայտ է, որ 06.10.2014թ. Դատարանի կողմից հայցվորի գրությունը ստանալուց հետո, որի համաձայն հայցվորի հասցեն անհնար է ճշտել, Դատարանը պետք է ողջամիտ միջոցներ ձեռնարկեր օրենքով վերապահված իր լիազորությունների շրջանակներում պատշաճ ծանուցումն ապահովելու ուղղությամբ, այն է՝ ղեկավարվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասով և պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին ուղարկել ծանուցումը՝ պահանջելով ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ուղարկել Դատարան, այլ ոչ թե կրկին ծանուցագիրն ուղարկել պատասխանողի նույն հասցեով, իսկ 25.12.2014թ. ստանալով պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի գրությունը, որի համաձայն՝ պատասխանողը օգոստոս ամսից բացակայում է, պետք է ղեկավարվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասով, պետք է քննել գործը հերթական՝ 22.01.2015թ. հրավիրված դատական նիստում, այլ ոչ թե հետաձգել գործի քննությունը 22.01.2015թ. կրկին պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին ուղարկելով ծանուցումը՝ պահանջելով ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ուղարկել Դատարան:

Վերոնշված գործողություններով խախտվել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասը, որը հանգեցրել է գործի քննության անհարկի ձգձգմանը շուրջ 4 ամսով:

Անդրադառնալով դատավոր Կ. Մելքունյանի բացատրությանը, որի համաձայն պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի 25.12.2014թ. գրությունը չի համարվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաղորդագրություն, Հանձնաժողովն անհիմն է համարում, քանի որ նշված գրությունում առկա է պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի կողմից Դատարանի ծանուցումը ստանալու և այդ փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն՝ գրության տեսքով, Դատարան ուղարկելու և Դատարանի կողմից այն ստանալու հանգամանքները, որոնք լրիվությամբ համապատասխանում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաղորդագրության ձևին:

3. ԸԻԴ 1858/02/14թ. քաղաքացիական գործով՝ 2014թ. հոկտեմբերի 14-ին Դատարան է մուտքագրվել <<Ղ-Տելեկոմ>> ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Լյովա Սերգեյի Մարտիրոսյանի՝ 616.868 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին:

Հայցադիմումը վարույթ է ընդունվել, հարուցվել է քաղաքացիական գործ և դատաքննության է նշանակվել 11.12.2014թ.: 20.10.2014թ. կողմերին դատական նիստի վայրի և ժամի մասին ծանուցագիր է ուղարկվել: Նիստին ոչ-ոք չի ներկայացել, նիստի օրվա դրությամբ բացակայում է պատասխանողին Դատարանի ուղարկած ծանուցագրի ստացման վերաբերյալ հետադարձ ծանուցման անդորրագիրը կամ պատշաճ ծանուցման վերաբերյալ այլ փաստաթուղթ: 2014թ. դեկտեմբերի 11-ին նշանակված դատական նիստը, գործին մասնակցող անձանց ներկայությունը ապահովելու նպատակով, հետաձգվել և նշանակվել է 2015թ. փետրվարի 19-ին: Պատասխանողը 16.02.15թ. դիմում է ներկայացրել 19.02.2015թ. դատական նիստը մեկ օրով հետաձգելու մասին /գործ թերթ 30/: Նիստին ոչ ոք չի ներկայացել, նիստը հետաձգվել և նշանակվել է 2015թ. մարտի 27-ին: Նիստին ոչ-ոք չի ներկայացել, գործին մասնակցող անձանց ներկայությունը ապահովելու նպատակով, նիստը հետաձգվել և նշանակվել է 2015թ. մայիսի 17-ին: Կողմերի բացակայությամբ գործի քննությունն ավարտվել և մայիսի 29-ին հրապարակվել է վճիռը:

Գործի քննության ժամանակ գործող ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որպես գործի քննությունը հետաձգելու հիմք, ամրագրում է գործին մասնակցող անձանց բացակայությամբ տվյալ դատական նիստում գործի քննության անհնարինությունը: Նույն օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով (այսուհետ՝ պատշաճ ձևով): Սա ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ Դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Վերոնշյալը նորմից բխում է, որ գործը չի կարող քննվել, եթե բացակայում է գործին մասնակցող անձի պատշաճ ծանուցումը, ուստի այդ հանգամանքով պայմանավորված՝ գործի քննությունը պետք է հետաձգվի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով: Հանձնաժողովն արձանագրում է, որ դատավոր Կ. Մելքումյանի կողմից սույն գործով իրականացվել են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված միջոցառումների և եղանակների օգտագործմամբ ակտիվ գործողություններ՝ դատական նիստի վայրի և ժամի մասին գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցելու ուղղությամբ, ուստի պետք է փաստել, որ 2014թ. դեկտեմբերի 11-ին դատական նիստի հետաձգումը պայմանավորված չէ որևէ դատավարական նորմի խախտման հանգամանքով: Հանձնաժողովը փաստում է նաև,

որ 19.02.2015թ. նշանակված դատական նիստի հետաձգումը պայմանավորված է 16.02.15թ. ներկայացրած գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ պատասխանողի միջնորդության բավարարմամբ, պատասխանողի կողմից դատական նիստին չներկայանալը Դատարանի կողմից հարգելի ճանաչված լինելու պատճառով: Հաշվի առնելով, որ դատական նիստին ներկա լինելը գործին մասնակցող անձի իրավունքն է, ուստի հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ հարգելի պատճառով կողմի դատական նիստին չներկայանալու դեպքում վերջինիս իրավունքի իրացումն ապահովելու նպատակով գործի քննությունը պետք է հետաձգվի և նշանակվի մեկ այլ օր, հետևաբար բացակայում է դատավարական նորմերի խախտումը նաև 19.02.2015թ. նշանակված դատական նիստի հետաձգման պարագայում:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը փաստում է, որ ԸԻԴ 1858/02/14թ. քաղաքացիական գործի քննությունն անհարկի չի ձգձգվել, ուստի բացակայում է նաև գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտման հանգամանքը:

4. ԸԻԴ 0473/05/13թ. վարչական գործով՝ 2013թ. նոյեմբերի 27-ին Դատարան է մուտքագրվել ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հայցադիմումն ընդդեմ <<Առաքելյան եղբայրներ>> ՍՊ ընկերության՝ 693.300 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին: Հայցադիմումը վարույթ է ընդունվել 02.12.13թ. և դատաքննության է նշանակվել 10.02.14թ.: 04.12.2013թ. պատասխանողին ուղարկվել է ծանուցագիր դատական նիստի վայրի և ժամի մասին և հայցադիմումը վարույթ ընդունելու, վարչական գործ հարուցելու և դատաքննության նշանակելու մասին որոշումը /գործ թերթ 21/: 10.02.14թ. դատական նիստը հետաձգվել և նշանակվել է 2014թ. ապրիլի 9-ին, պատասխանողի ներկայությունն ապահովվելու նպատակով, ընդ որում 10.02.14թ. դրությամբ Դատարանը չէր ստացել պատասխանողին ուղարկված ծանուցագիրը վերջինիս կողմից ստանալու վերաբերյալ պատշաճ փաստաթուղթ: 11.02.2014թ. Դատարանը կրկին պատասխանողին է ուղարկել ծանուցագիր՝ դատական նիստի վայրի և ժամի մասին /գործ թերթ 27/: 06.03.2014թ. Դատարանը հետ է ստացել պատասխանողին ուղարկված ծանուցագիրը՝ վերջինիս տեղափոխված լինելու պատճառով /գործ թերթ 22, 23/: 10.03.2014թ. Դատարանը հայցվորին գրություն է ուղարկել՝ խնդրելով Դատարանին ներկայացնել պատասխանողի ճշտված հասցեն: 20.03.2014թ. Դատարանը ստացել է հայցվորի միջնորդությունը՝ նյութերը պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարին ուղարկելու վերաբերյալ: 2014թ. ապրիլի 9-ին նշանակված դատական նիստում Դատարանը քննարկել է հայցվորի 20.03.2014թ. ներկայացրած միջնորդությունը և բավարարելով այն որոշել է պատասխանողի նյութերը ուղարկել Շահումյանի համայնքի ղեկավարին, իսկ գործի քննությունը հետաձգել և նշանակել 2014թ. մայիսի 20-ին: 10.04.2014թ. Դատարանի գրությամբ պատասխանողի նյութերը ուղարկվել են պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարին /գործ թերթ 32/: 2014թ. մայիսի 20-ին դատական նիստին ոչ ոք չի ներկայացել, համայնքի ղեկավարից պատասխան չի ստացվել, նիստը հետաձգվել և նշանակվել է 11.08.14թ.: Ի լրումն վարչական գործերի՝ նյութերին 22.05.2014թ.

պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարին է ուղարկվել դատական ծանուցագիրը: 11.08.2014թ. դատական նիստին ոչ ոք չի ներկայացել, համայնքի ղեկավարից պատասխան չի ստացվել, նիստը հետաձգվել և նշանակվել է 18.09.14թ.: Նույն հիմքով 18.09.14թ. դատական նիստը հետաձգվել և նշանակվել է 13.11.14թ.: Նույն հիմքով 13.11.14թ. դատական նիստը հետաձգվել և նշանակվել է 15.01.15թ.: 15.01.15թ. դատական նիստին ներկայացել է հայցվորի ներկայացուցիչը, իսկ 24.12.2014թ. Դատարանը ստացել է պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարի կողմից Դատարանի ուղարկած նյութերը ստանալու վերաբերյալ պատշաճ փաստաթուղթ՝ հետադարձ ծանուցման անդորրագիր: Գործը քննվել է պատասխանողի ներկայացուցչի բացակայությամբ և վճիռը հրապարակվել է 20.01.15թ.:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանն իրավունք ունի հետաձգելու գործի դատաքննությունը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով: Վերոշարադրվածում արդեն իսկ անդրադարձել ենք գործին մասնակցող անձի պատշաճ ծանուցման բացակայությամբ գործի քննության անհնարինությանը, ուստի պետք է պարզել, արդյոք, Դատարանը ձեռնարկել է օրենքով սահմանված միջոցառումները և եղանակները դատական նիստի վայրի և ժամի մասին գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցելու համար:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով: Դատավարության մասնակիցները կարող են համաձայնվել ծանուցման այլ եղանակի մասին, մասնավորապես, ֆաքսով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով, հեռագրով, իսկ 2-րդ մասի համաձայն՝ ծանուցագրի հետ մեկտեղ հասցեատիրոջն ուղարկվում են դատավարական փաստաթղթերի պատճենները:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ծանուցագրերը ուղարկվում են անձի նշած հասցեով, իսկ նման հասցե նշած չլինելու դեպքում՝ սույն օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված հասցեով:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձ պատասխանողին հայցադիմումն ուղարկվում է իրավաբանական անձանց պետական ռեգիստրում նշված հասցեով, իսկ 7-րդ մասի համաձայն՝ եթե հայցադիմումը պատասխանողը չի ստացել սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերով սահմանված կարգով ուղարկվելու միջոցով, ապա հայցվորի միջնորդությամբ Դատարանը հայցադիմումն ուղարկում է պատասխանողի վերջին հայտնի բնակության կամ գրանցման վայրի համայնքի ղեկավարին:

Վերոշարադրված նորմերից ակնհայտ է, որ պատասխանողի պատշաճ ծանուցման վերաբերյալ պատշաճ ապացույց կարող է համարվել վերջինիս կողմից ծանուցագրի առձեռն ստացումը, փոստով իր հասցեին ուղարկելու դեպքում՝ հետադարձ ծանուցման անդորրագիրը, իրավաբանական անձ պատասխանողի իր

գրանցման հասցեում չգտնվելու և հայցվորի կողմից միջնորդության ներկայացման դեպքում պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարին ծանուցագիրն կից փաստաթղթերով ուղարկելը և վերջինիս կողմից ստացման վերաբերյալ պատշաճ փաստաթղթի /օրինակ՝ հետադարձ ծանուցման անդորրագրի/ ստացումը: Ընդ որում պատասխանողի ծանուցման պատշաճ ապացույցի ստացման համար Դատարանը պետք է ձեռնարկի 62-րդ և 75-րդ հոդվածներով սահմանված ակտիվ միջոցառումներ, քանզի դրանց չիրականացումը կարող է հանգեցնել գործի անհարկի ձգձգմանը:

Հանձնաժողովը փաստում է, որ դատավոր Կ.Մելքումյանը 0473/05/2013թ. վարչական գործով իրականացրել է վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ և 75-րդ հոդվածներով սահմանված միջոցառումները, իսկ գործի ձգձգումը պայմանավորված էր պատասխանողին ծանուցելու անհնարինությամբ և պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարի կողմից ծանուցագիրը և կից փաստաթղթերը ստանալու վերաբերյալ պատշաճ փաստաթղթի չստացմամբ, որը կարող է պայմանավորված լինել փոստային ծառայության անարդյունավետ աշխատանքով, հետևաբար սույն գործով բացակայում են դատավոր Կ.Մելքումյանի կողմից դատավարական նորմերի խախտման և գործի անհարկի ձգձգման հանգամանքները:

5. ԸԻԴ 0062/05/14թ. վարչական գործով՝ 2014թ. հունվարի 15-ին Դատարան է մուտքագրվել ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հայցադիմումն ընդդեմ <<Հայր և որդի Պետրոսյաններ>> ՍՊ ընկերության՝ 7.240.100 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին: Հայցադիմումը վարույթ է ընդունվել 21.01.14թ. և դատաքննության է նշանակվել 29.04.14թ.: 30.01.2014թ. Դատարանը ստացել է պատասխանողին ուղարկած ծանուցագիրը վերջինիս կողմից ստանալու փաստը հաստատող հետադարձ ծանուցման անդորրագիրը /գործ թերթ 26/: Կողմերը նիստին չեն ներկայացել, գործին մասնակցող անձանց ներկայությունը ապահովելու նպատակով գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 28.08.14թ.: 08.05.2014թ. Դատարանը ստացել է պատասխանողին ուղարկած ծանուցագիրը վերջինիս կողմից ստանալու փաստը հաստատող հետադարձ ծանուցման անդորրագիրը /գործ թերթ 30/: Հայցվորի ներկայացուցչի կողմից լրացուցիչ նյութեր ներկայացնելու համար 28.08.14թ. դատական նիստը հետաձգվել և նշանակվել է 13.10.14թ.: 13.10.14թ. դատական նիստին ոչ ոք չի ներկայացել, պատասխանողը պատշաճ ծանուցված էր դատական նիստի վայրի և ժամի մասին /գործ թերթ 36/, գործի քննությունը գործին մասնակցող անձանց ներկայությունը ապահովելու նպատակով հետաձգվել և նշանակվել է 09.12.14թ.: 09.12.14թ. դատական նիստին ոչ ոք չի ներկայացել, պատասխանողը պատշաճ ծանուցված էր դատական նիստի վայրի և ժամի մասին /գործ թերթ 40/, գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 23.01.15թ.: 23.01.15թ. դատական նիստին ներկայացել է հայցվորի ներկայացուցիչը, պատասխանողի ներկայացուցիչը չի ներկայացել, սակայն պատշաճ ծանուցված էր դատական նիստի վայրի և ժամի մասին /գործ թերթ 44/, պատասխանողի ներկայությունը ապահովելու համար գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է

26.03.15թ.: 26.03.15թ. դատական նիստին ներկայացել է միայն հայցվորի ներկայացուցիչը, պատասխանողի ներկայացուցիչը չի ներկայացել, սակայն պատշաճ ծանուցված էր դատական նիստի վայրի և ժամի մասին /գործ թերթ 48/, գործի քննությունն ավարտվել և վճիռը հրապարակվել է 27.03.15թ.:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Նշված գործով դատավոր Կ.Մելքումյանը 5 անգամ հետաձգել է գործի քննությունը՝ գործին մասնակցող անձանց ներկայությունը ապահովելու նպատակով, վերջիններիս կողմից պատշաճ ծանուցված լինելու պարագայում, որը ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չի կարող արգելք հանդիսանալ գործի քննության համար, հետևաբար, Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ դատավոր Կ.Մելքումյանի կողմից խախտվել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որը և հանգեցրել է շուրջ 10 ամիս տևողությամբ գործի քննության անհարկի ձգձգմանը:

Ինչ վերաբերում է դատավոր Կ.Մելքումյանի բացատրությամբ նշված պարտավորությունների հաշվարկի վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի դիրքորոշման և պատասխանողի կողմից պարտավորության ընդունման, հաշվարկի վերաբերյալ համաձայնության ճշտման նպատակով գործի քննության հետաձգմանը, Հանձնաժողովն արձանագրում է, որ դատական նիստերի արձանագրություններից բխում է, որ գործի քննությունը այդ հիմքով չէր հետաձգվել, այլ հետաձգվել էր գործին մասնակցող անձանց ներկայությունն ապահովելու նպատակով: Բացի դրանից, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական Դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio), իսկ 3-րդ մասի համաձայն՝ Դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես, պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստին: Բացատրությամբ նշված հիմքերի առկայության պարագայում Դատարանը կարող էր կողմերից պահանջել վարչական վարույթի նյութերը, տեղեկությունները, ապացույցները, լրացուցիչ բացատրությունները, հանձնարարել կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստին, որը դատավոր Կ.Մելքումյանի կողմից չի կատարվել:

6. ԸԻԴ 0122/05/14թ. վարչական գործով՝ 2014թ. փետրվարի 10-ին Դատարան է մուտքագրվել ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հայցադիմումն ընդդեմ <<Ալրադաց>> ՓԲ ընկերության՝ 556.600 ՀՀ դրամ բռնագանձելու

պահանջի մասին: Հայցադիմումը վարույթ է ընդունվել 17.02.14թ. և դատաքննության է նշանակվել 27.05.14թ.: Հայցադիմումին կից ներկայացված պետոեզիստրի վկայականի համաձայն՝ պատասխանող ընկերությունը գրանցված է ԼՂՀ Ասկերանի շրջանի գ.Բերքաձոր հասցեում: 19.02.2014թ. դատական նիստի վայրի և ժամի մասին ծանուցագիրն ուղարկվել է ԼՂՀ Ասկերանի շրջանի գ.Բերքաձոր հասցեով՝ պատասխանող ընկերության տնօրեն Մովսես Վահանի Սահակյանին և 07.03.2014թ. հետ է վերադարձվել Դատարանի ուղարկած ծանուցագիրը՝ պատասխանող ընկերությունում Մ.Սահակյանի չաշխատելու պատճառով /գործ թերթ 36-39/: 31.03.2014թ. Դատարանը հայցվորին գրություն է ուղարկել՝ խնդրելով Դատարան ներկայացնել պատասխանողի ճշտված հասցեի վերաբերյալ տեղեկություն /գործ թերթ 40/: 04.04.2014թ. հայցվորը միջնորդություն է ներկայացրել նշված փաստաթղթերը պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարին ուղարկելու վերաբերյալ /գործ թերթ 41/: 08.04.2014թ. Դատարանը պատասխանողին ուղարկման ենթակա դատավարական փաստաթղթերը և դատական նիստի վայրի և ժամի մասին ծանուցագիրը ուղարկել է ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետին: 27.05.2014թ. դատական նիստում Դատարանը քննարկել է հայցվորի միջնորդությունը՝ պատասխանողի նյութերը գրանցման վայրի համայնքի ղեկավարին ուղարկելու վերաբերյալ՝ բավարարելով այն և դրանով պայմանավորված գործի քննությունը հետաձգել և նշանակել է 25.07.2014թ.: 30.05.2014թ. Դատարանը պատասխանողի նյութերը և դատական նիստի վայրի և ժամի մասին ծանուցագիրը ուղարկել է պատասխանողի գրանցման վայրի՝ ԼՂՀ Ասկերանի շրջանի Բերքաձոր համայնքի ղեկավարին, 23.06.2014թ. ստանալով վերջինիս կողմից նշված փաստաթղթերը ստանալու փաստը հաստատող հետադարձ ծանուցման անդորրագիր /գործ թերթ 49, 50/: 25.07.2014թ. դատական նիստին ոչ-ոք չի ներկայացել, գործին մասնակցող անձանց ներկայությունը ապահովելու նպատակով, գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 07.08.14թ.: Նույն հիմքով գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 15.09.14թ.: Նույն հիմքով գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 27.11.14թ.: Նույն հիմքով գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 22.01.15թ.: Նիստին ներկայացել է հայցվորի ներկայացուցիչը, պատասխանողի ներկայացուցչի բացակայությամբ գործի քննությունն ավարտվել և վճիռը հրապարակվել է 28.01.15թ.:

ԼՂՀ վարչական դատավարության 62-րդ հոդվածի վերլուծությունից ակնկհայտ է, որ ծանուցագիրը և դատավարական փաստաթղթերը ուղարկվում են գործին մասնակցող անձանց, հետևաբար իրավաբանական անձ պատասխանողի դեպքում ծանուցագիրը պետք է ուղարկվեր իրավաբանական անձին, այլ ոչ թե իրավաբանական անձի ենթադրյալ ղեկավարին, ինչի պատճառով էլ սույն գործով ծանուցագիրը չի ստացվել իրավաբանական անձ պատասխանողի կողմից համաձայն գործի նյութերի /գործ թերթ 37/:

Հանձնաժողովն արձանագրում է, որ 08.04.2014թ. ստացած լինելով հայցվորի միջնորդությունը՝ պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարին

դատավարական փաստաթղթերը և դատական նիստի վայրի և ժամի մասին ծանուցագիրը ուղարկելու վերաբերյալ, ուղարկել է ոչ թե պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարին /գրանցման վայր է հանդիսանում ԼՂՀ Ասկերանի շրջանի գ.Բերքաձորը/, այլ ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետին, ուստի դատավոր Կ.Մելքումյանը պատասխանողին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ չի իրականացրել ակտիվ գործողություններ՝ նախատեսված ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ և 75-րդ հոդվածներով, խախտելով նշված նորմերի պահանջները: Մինևույն ժամանակ 23.06.2014թ. ստանալով պատշաճ փաստաթուղթ պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարի /ԼՂՀ Ասկերանի շրջանի գ.Բերքաձորի համայնքի ղեկավարի/ կողմից պատասխանողի դատավարական փաստաթղթերը ստանալու վերաբերյալ պատշաճ ապացույց՝ հետադարձ ծանուցման անդորրագիր /գործ թերթ 50/, 4 անգամ անընդմեջ հետաձգել է պատշաճ ծանուցված կողմի չներկայանալու պատճառով գործի քննությունն ընդամենը 5 ամսից ավել ժամկետով, որի հետևանքով խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Վերոշարադրվածից ելնելով՝ Հանձնաժողովը փաստում է, որ նշված գործով դատավոր Կ.Մելքումյանը, խախտելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի, 62-րդ և 75-րդ հոդվածների պահանջները, անհարկի ձգձգել է գործի քննությունը շուրջ 8 ամիս:

Ինչ վերաբերում է դատավոր Կ.Մելքումյանի բացատրությամբ նշված հանգամանքին 25.07.2014թ., 07.08.2014թ., 15.09.2014թ. ԼՂՀ կառավարության որոշմամբ ոչ աշխատանքային օր սահմանելուն, ապա Հանձնաժողովը փաստում է, որ ԼՂՀ կառավարության թիվ 856-Ն առ 04.12.2013թ. աշխատանքային օրերը տեղափոխելու որոշմամբ ազգային տաղավար օրերի և դրանց հաջորդող հիշատակ օրերի կապակցությամբ 2014թ. ապրիլի 21-ը, հուլիսի 28-ը, օգոստոսի 18-ը և սեպտեմբերի 15-ը աշխատանքային երկուշաբթի օրերը համապատասխանաբար տեղափոխվել են 2014թ. ապրիլի 26-ը, օգոստոսի 2-ը, օգոստոսի 23-ը և սեպտեմբերի 27-ը:

7. ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործով՝ Ստեփանակերտի քաղաքապետարանն ընդդեմ Գագիկ Ռադիկի Միքայելյանի՝ վճարման կարգադրություն արձակելու մասին հայցադիմում է ներկայացրել 18.04.14թ.: Դատարանը 30.04.14թ. արձակել է վճարման կարգադրություն: 29.05.14թ. պատասխանողը ներկայացրել է հակընդդեմ հայց: Դատարանի 03.06.14թ. որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի, հակընդդեմ հայցադիմումը վերադարձվել և գործը դատաքննության է նշանակվել 25.08.14թ.: Կողմերը չեն ներկայացել, դատական նիստը գործին մասնակցող անձանց ներկայությունն ապահովելու նպատակով հետաձգվել և նշանակվել է 27.10.14թ.: Նիստին ներկայացել է պատասխանողի ներկայացուցիչը, պատասխանողի չներկայանալու հիմքով գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է

15.12.14թ.: Նիստին ոչ ոք չի ներկայացել, նույն հիմքով գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 09.02.15թ.: Նույն հիմքով գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 24.03.15թ.: Նույն օրը պատասխանողը գրավոր միջնորդություն է ներկայացրել ԸԻԴ 0204/05/14թ. վարչական գործով առ 25.11.2014թ. վճիռը գործի նյութերին կցելու վերաբերյալ, որով Դատարանը /դատավոր Կ.Մելքունյան/ որոշել է ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանին կից վարչական հանձնաժողովի 2014թ. մարտի 14 թիվ 14 որոշումը՝ Գագիկ Ռուդիկի Միքայելյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին /որպիսի վարչական ակտի հիման վրա գումար գանձելու պահանջ է ներկայացրել պատասխանողի դեմ սույն գործով հայցվորը/, ճանաչել անվավեր, վճիռը չի բողոքարկվել հետևաբար 26.12.2014թ-ին մտել է օրինական ուժի մեջ: 24.03.2015թ. դատական նիստին ոչ ոք չի ներկայացել, գործի քննությունն ավարտվել է և վճիռը 03.04.15թ. հրապարակվել է՝ հայցի մերժմամբ:

ԸԻԴ 0204/05/14թ. վարչական գործով առ 25.11.2014թ. վճռից բխում է, որ տվյալ գործով հայցադիմումը դատավոր Կ.Մելքունյանի կողմից վարույթ է ընդունվել 25.04.2014թ., այսինքն մինչև ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործով նշանակված դատական նիստը՝ 25.08.14թ.:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատավարությունում գործի վարույթը կասեցնելու հիմքերի, ինչպես նաև կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո գործի վարույթը վերսկսելու վրա տարածվում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Հաշվի առնելով, որ առանց ԸԻԴ 0204/05/14թ. վարչական գործով վճռի կայացումը անհնար էր ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործի քննությունը, քանի որ նշված գործով պահանջը բխում էր ԸԻԴ 0204/05/14թ. վարչական գործով վիճարկվող վարչական ակտից, և այդ երկու գործերը գտնվում էին դատավոր Կ.Մելքունյանի վարույթում, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավոր Կ.Մելքունյանը պարտավոր էր կասեցնել ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործի վարույթը մինչև ԸԻԴ 0204/05/14թ. վարչական գործով վճռի օրինական ուժի մեջ մտնելը՝ 26.12.2014թ.:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ դատավոր Կ.Մելքունյանը չնայած խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետը, չկասեցնելով գործի վարույթը և խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված դատավարության

մասնակիցների չներկայանալու պատճառով հետաձգել է գործի քննությունը՝ վերջիններիս ներկայությունը ապահովելու նպատակով, այնուամենայնիվ, մինչև 26.12.2014թ. գործի քննության ողջամիտ ժամկետի խախտում տեղի չի ունեցել, քանի որ մինչև ԸԻԴ 0204/05/14թ. վարչական գործով վճռի օրինական ուժի մեջ մտնելը՝ 26.12.2014թ. անհնար էր ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործի քննությունը:

Պետք է արձանագրել նաև, որ 09.02.2015թ. դատական նիստում ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործը կարող էր քննվել և ավարտվել, քանի որ կողմերը պատշաճ ծանուցված էին դատական նիստի վայրի և ժամի մասին, իսկ դատավոր Կ.Մելքումյանը պարտավոր էր տեղեկացված լինել ԸԻԴ 0204/05/14թ. վարչական գործով վճռի ուժի մեջ մտած լինելու մասին, հետևաբար գործի քննությունը անհարկի հետաձգվել է 09.02.2015թ-ից մինչև 24.03.2015թ-ը, 43 օրով:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի /այսուհետ նաև՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայով և Սահմանադրությամբ հռչակված վերոնշյալ իրավունքի իրականացումն ապահովելու նպատակով ԼՂՀ դատական օրենսգիրքը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերը, որպես արդարադատության արդյունավետ իրականացման սկզբունքներ, նախատեսել են գործերի քննության նախապատրաստական փուլ և ամրագրել գործերի ողջամիտ ժամկետում քննության պահանջ:

Մասնավորապես, ԼՂՀ դատական օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ դատական քննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ դատական նիստով, իսկ գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված է, որ գործը դատարանում պետք է քննվի և վճիռ կայացվի ողջամիտ ժամկետում, իսկ դատաքննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ դատական նիստով:

Նույն օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստումը պետք է իրականացվի ողջամիտ ժամկետում:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում սահմանված է, որ դատական քննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ դատական նիստով, առանց հետաձգումների, իսկ գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործերի քննության և լուծման համար նույն օրենսգրքով սահմանված են ժամկետներ:

Որպես ի պաշտոնե գործելիս դատավորի վարքագծի կանոն՝ ԼՂՀ դատական օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետով սահմանվել է, որ դատական իշխանություն իրականացնելիս դատավորը պարտավոր է գործի քննությունն իրականացնել ողջամիտ ժամկետներում՝ խուսափելով անհարկի ձգձգումներից:

Եվրոպական դատարանը նշում է, որ ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նպատակն է դատական քննության բոլոր մասնակիցների պաշտպանությունը դատաքննության անհարկի ձգձգումներից, ինչը կարող է խափանել արդարադատության արդյունավետությունը և վստահությունը վերջինիս նկատմամբ: <<Ողջամիտ ժամկետի>> էությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացում, դրանով իսկ վերջ տալով անորոշությանը, որում գտնվում է այս կամ այն անձը՝ կապված նրա քաղաքացիաիրավական կարգավիճակից կամ նրան առաջադրված քրեական մեղադրանքից:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Եվրոպական դատարանը յուրաքանչյուր դեպքում ներպետական վարույթի տևողության ողջամտությունը գնահատում է՝ ելնելով քննության առարկա գործի կոնկրետ հանգամանքներից: Չնայած դրան, Եվրոպական դատարանը ողջամիտ ժամկետի վիճարկմանը վերաբերող մի շարք գործերի քննության արդյունքում ձևավորել է որոշակի չափանիշներ, որոնք դատաքննության ողջամտությունը գնահատելիս կիրառվում են բոլոր գործերի նկատմամբ: Մասնավորապես, Եվրոպական դատարանը հաշվի է առնում տվյալ դատական գործի բարդությունը, ինչպես դիմողի, այնպես էլ համապատասխան մարմինների այնպիսի վարքագիծը, որն ազդել է դատաքննության տևողության վրա, դիմողի համար այն արժեքի կարևորությունը, որին առնչվում է դատաքննությունը: Ողջամիտ ժամկետի հետ կապված Եվրոպական դատարանը ելնում է հետևյալ չափանիշներից՝

- գործի բարդությունը,
- դիմողի համար ողջամիտ ժամկետի չափանիշն անհամարժեք է հետևանքները,
- համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը,
- դիմողի սեփական վարքագիծը:

Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանը ելակետային է համարում մի շարք չափանիշներ, նշելով, որ բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս հետևյալ գործոններին. հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների թվաքանակը, միջազգային գործոնները,

դատավարությանը նոր անձանց ներգրավումը, հաշվարկները, փորձագետների անհրաժեշտությունը, վիճելի իրավահարաբերության բնույթին, կիրառելի իրավունքին և այլն: Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանը հաշվի է առնում նաև «ժամանակի և տարածության առումով այն հեռավորությունը, որ կա քննվող դեպքերի կամ փաստերի և դատավարական գործընթացի միջև»: Գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի կարող արդարացվել, անգամ եթե համապատասխան դատավարական որոշումներն ընդունվել են անձի օգտին (քրեական գործի վարույթի կարճում, պատժի մեղմացում, հայցադիմումի (դիմումի) բավարարում և այլն): Դատաքննության ժամկետի ողջամտությունը գնահատելիս հաշվի է առնվում կողմի ռիսկի աստիճանի գործոնը, հատկապես այն դեպքում, երբ վեճն իր բնույթով հատուկ է, կամ որի լուծումն էական նշանակություն ունի դիմողի համար: Քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտման փաստը գնահատելիս հաշվի են առնվում միայն օբյեկտիվ պատճառները: Իսկ մնացածը՝ դատարանների ծանրաբեռնվածությունը, դատավորների անփորձությունը, դատական կամ ընդհանրապես իրավական համակարգի անկատարությունը, մեղադրյալի և նրա պաշտպանի, ինչպես նաև գործի մյուս մասնակիցների վարքագիծը գործի քննությունը ձգձգելու օբյեկտիվ պատճառ դիտվել չեն կարող: Ներպետական մարմիններում դատաքննության կամ այլ դատական վարույթի տևողության ժամկետը գնահատելիս Դատարանն առաջնորդվում է այն սկզբունքով, համաձայն որի ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը կարող է կատարվել միայն պետության մեղքով տեղի ունեցող ձգձգումներով:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հանգամանքով պայմանավորված, 2 ամիս 5 օր ժամկետով ԸԻԴ 1471/02/2014թ. քաղաքացիական գործի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ պայմանավորված շուրջ 4 ամիս ժամկետով, ԸԻԴ 1404/02/2014թ. քաղաքացիական գործի, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հանգամանքով պայմանավորված, շուրջ 10 ամիս ժամկետով, ԸԻԴ 0062/05/2014թ. վարչական գործի, նույն հոդվածի և 62-րդ, 75-րդ հոդվածների պահանջների խախտման հիմքով պայմանավորված շուրջ 8 ամիս, ԸԻԴ 0122/05/2014թ. վարչական գործի, 43 օր ժամկետով և ԸԻԴ 0280/05/2014թ. վարչական գործի քննության անհարկի ձգձգումները հանգեցրել են տվյալ գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտմանը: Մասնավորապես, տվյալ գործերը չեն առանձնանում հաստատման ենթակա առանձնահատուկ փաստերով, չկար նոր անձանց ներգրավման անհրաժեշտություն, վկաների հարցաքննության, փորձաքննության նշանակման անհրաժեշտություն, իսկ իրավական ասպեկտի տեսանկյունից պարզ է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառելի իրավունքը, ուստի նշված գործերը իրենց բնույթով չեն դասվում բարդ գործերի շարքին: Պետք է արձանագրել նաև այն, որ դիմողի /հայցվորի/ համար ողջամիտ ժամկետի չպահպանումը հանգեցրել է իր հայցվող

գույքային իրավունքի ժամանակին իրացման հնարավորության սահմանափակմանը, որի արդյունքում իրավունքների դատական պաշտպանության եղանակը դառնում է անարդյունավետ:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոշարադրված դատավարական նորմերի խախտումները, դրանցով պայմանավորված գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտումները ակնհայտ են, քանի որ դրանց առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով, իսկ դրանց պարբերականությունը հեղինակագրկում է արդարադատությունը և դատավորի բարձր կոչումը:

Դատարանի գործողությունները, որոնք պարունակում են դատավարական նորմի խախտում, չեն կարող կայացվել դատավորի մեղքի բացակայությամբ: Տվյալ պարագայում դատավորի մեղավորությունն առկա է, քանի որ նա չի դրսևորել բավարար ուշադրություն և շրջահայացություն, որի արդյունքում չի պահպանվել օրինականության սկզբունքը և թույլ են տրվել դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ:

Վերոգրյալից հետևում է, որ դատավոր Կ.Մելքունյանն արդարադատություն իրականացրել է կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր կանխատեսել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը>>:

3. Դատավորի բացատրությունում բերված փաստարկները Հանձնաժողովի հարուցած կարգապահական վարույթի վերաբերյալ.

Դատավոր Կ.Մելքունյանը 2015թ. օգոստոսի 20-ին Հանձնաժողովին ներկայացրել է բացատրություն հետևյալ բովանդակությամբ`

<<Հանձնաժողովի թիվ ԷԿ-1-04/15թ. առ 11.08.2015թ. որոշմամբ հարուցվել է կարգապահական վարույթ` ԸԻԴ 1471/02/2014թ., ԸԻԴ 1404/02/2014թ., ԸԻԴ 1858/02/14թ. քաղաքացիական և ԸԻԴ 0473/05/13թ., ԸԻԴ 0062/05/14թ., ԸԻԴ 0122/05/14թ., ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործերով մեկից ավելի անգամ դատական նիստերը կազմակերպվելու և դատաքննությունն երկարաձգվելու հիմքերով:

Հանդիսանալով նշյալ գործերով նախագահող դատավոր, հաշվի առնելով Հանձնաժողովի թիվ ԷԿ-1-04/15թ. առ 11.08.2015թ. որոշմամբ արձանագրված փաստերը և ղեկավարվելով ԼՂՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով` տալիս եմ բացատրություն հետևյալի մասին.

1. ԸԻԴ 1471/02/2014թ. քաղաքացիական գործ.

<<Արցախբանկ>> փակ բաժնետիրական ընկերությունը 2014 թվականի օգոստոսի 11-ին հայցադիմում է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան` Ալբերտ Գեորգիի Արզումանյանից 12986.02 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար, միաժամանակ` հաշվեգրվելիք տոկոսներն ու տույժերը` մինչև պարտավորության փաստացի մարումը գանձելու և բռնագանձումը գրավադրված

գույքի՝ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների փողոցի թիվ 21 շենքի թիվ 22 հասցեում գտնվող 60.9 քառ. մետր մակերեսով բնակարանի նկատմամբ տարածելու պահանջների մասին: 2014 թվականի հոկտեմբերի 08-ին, նոյեմբերի 26-ին և 2015 թվականի հունվարի 13-ին նշանակված դատական նիստերում քննելով տվյալ քաղաքացիական գործը՝ Դատարանը 2015 թվականի հունվարի 15-ին վճռել է հայցը բավարարել ամբողջությամբ: 2014 թվականի հոկտեմբերի 08-ին հրավիրված դատական նիստին հայցվորը չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը, իսկ պատասխանողը չի ներկայացել, որի հիմքով, ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, այն, որ Դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե այն չի կարող քննվել տվյալ նիստում, մասնավորապես՝ գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայության պատճառով, հետաձգվել և նշանակվել է 2014 թվականի նոյեմբերի 26-ին, իսկ կողմի ներկայության անհրաժեշտությունը պայմանավորվել է հայցվորի կողմից՝ պարտավորության վերաբերյալ տեղեկություններ ներառող փաստաթղթերի բնօրինակներ ու պարտավորության մնացորդի վերաբերյալ տեղեկություններ ներկայացվելու, իսկ պատասխանողից՝ պարտավորության կատարման, հայցի ընդունման, հերքելու, մնացորդի մասով տեղեկություններ ստանալու պայմաններով: 2014 թվականի նոյեմբերի 26-ի դատական նիստին ներկայացել է հայցվորի ներկայացուցիչը, իսկ պատասխանողը չի ներկայացել, ինչը պատասխանողի մասով վերը նշված հիմքով նպաստել է գործի քննության հետաձգմանը՝ պատասխանողի ներկայությունն ապահովելու նպատակով: Դատարանի հետաձգման մասին ծանուցագիրը վերադարձվել է Դատարան 2014 թվականի դեկտեմբերի 05-ին՝ «<дома никого нету>> փոստային առաքանու առաքիչի գրառմամբ: Հաշվի առնելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի պահանջը, այն, որ գործին մասնակցող անձինք պարտավոր են Դատարանին և գործին մասնակցող այլ անձանց հայտնել գործի վարույթի ժամանակ իրենց հասցեն փոխելու մասին և նման հաղորդման բացակայության դեպքում դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի բնակվում կամ չի գտնվում, Դատարանը 2015 թվականի հունվարի 13-ին քննել է գործն ու ավարտել տվյալ նիստով:

2. ԸԻԴ 1404/02/2014թ. քաղաքացիական գործ.

<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> փակ բաժնետիրական ընկերությունը 2014 թվականի օգոստոսի 01-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ Անուշավան Մուրադի Գևորգյանից 313711.8 ՀՀ դրամ, միաժամանակ՝ հաշվեգրվելիք տոկոսներն ու տույժերը՝ մինչև պարտավորության փաստացի մարումը, բռնագանձելու պահանջների մասին: 2014 թվականի հոկտեմբերի 06-ին, նոյեմբերի 26-ին, 2015 թվականի հունվարի 22-ին և մարտի 12-ին նշանակված դատական նիստերում քննելով տվյալ քաղաքացիական գործը՝ Դատարանը 2015 թվականի մարտի 27-ին վճռել է հայցը բավարարել ամբողջությամբ: Դատարանի կողմից Անուշավան Մուրադի Գևորգյանին ուղարկված

հայցադիմումն ընդունելու, քաղաքացիական գործ հարուցելու և 2014 թվականի հոկտեմբերի 06-ին դատաքննության նշանակելու որոշումը, կից՝ հայցադիմումն առդիր նյութերով հասցեի անճշտության հիմքով՝ «տեղում չի» նշումով 04.09.2014թ. վերադարձվել են Դատարան: Դատարանը 08.09.2014թ. ծանուցել է հայցվորին՝ պատասխանողի հասցեի անճշտության մասին: Դատական նիստը հետաձգվել և նշանակվել է 2014 թվականի նոյեմբերի 26-ին: Հայցվորը պատասխանողի հասցեի մասին գրավոր տեղեկացրել է Դատարանին, որ անհնար է պարզել պատասխանողի գտնվելու վայրը, որը ստացվել է 07.10.2014թ.: Դատարանի՝ պատասխանողին ուղարկված ծանուցագիրը՝ գործի քննությունը 2014 թվականի նոյեմբերի 26-ին նշանակվելու վերաբերյալ, վերադարձվել է Դատարան, որի, ինչպես նաև հայցվորի գրության հիմքով դատական նիստը հետաձգվել ու նշանակվել է 2014 թվականի հունվարի 22-ին՝ պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին ծանուցելու և հաղորդագրություն ստանալուց հետո գործի քննությունը շարունակելու նպատակով: 2014 թվականի նոյեմբերի 28-ին Դատարանը դիմել է ԼՂՀ Շահումյանի շրջանի Քարվաճառի քաղաքապետին՝ մինչև 2015 թվականի հունվարի 22-ը նյութերը ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն Դատարան ուղարկելու խնդրանքով, որին ի պատասխան ԼՂՀ Շահումյանի շրջանի Քարվաճառի քաղաքապետը 2014 թվականի դեկտեմբերի 25-ին հայտնել է, որ պատասխանողն օգոստոս ամսից բացակայում է Քարվաճառի համայնքից և նրա գտնվելու վայրը հայտնի չէ: Դատարանը, հաշվի առնելով գրության բովանդակությունը և հաղորդագրություն ներկայացվելու անհրաժեշտությունը, ի լրումն 2014 թվականի նոյեմբերի 28-ի նյութերի, ԼՂՀ Շահումյանի շրջանի Քարվաճառի քաղաքապետին ուղարկել է պատասխանողի դատական ծանուցագիրը՝ դատաքննությունը 2015 թվականի մարտի 12-ին նշանակվելու վերաբերյալ, որը ԼՂՀ Շահումյանի շրջանի Քարվաճառի քաղաքապետին ստորագրությամբ հանձնվելու մասին ծանուցագիրը Դատարան է մուտքագրվել 2015 թվականի մարտի 10-ին: Դատարանը 2015 թվականի մարտի 12-ի նիստում, ԼՂՀ Շահումյանի շրջանի Քարվաճառի քաղաքապետի գրությունը դիտել է որպես հաղորդագրություն, անցել գործի քննմանը և կողմերի բացակայությամբ ավարտել նիստը:

3. ԸԻԴ 1858/02/14թ. քաղաքացիական գործ.

«Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերությունը 2014 թվականի հոկտեմբերի 14-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ Լյովա Սերգեյի Մարտիրոսյանից 616868 ՀՀ դրամ գումար՝ որպես 094/05-06-28 և 094/07-06-28 հեռախոսահամարներով 2013 թվականի դեկտեմբեր և 2014 թվականի հունվար ամիսներին մատուցված ծառայության գումար գանձելու վերաբերյալ: 2014 թվականի դեկտեմբերի 11-ին, 2015 թվականի փետրվարի 19-ին, մարտի 27-ին և մայիսի 18-ին նշանակված դատական նիստերում քննելով տվյալ քաղաքացիական գործը Դատարանը 2015 թվականի մայիսի 29-ին վճռել է հայցը բավարարել ամբողջությամբ: Գործով և հայցվորը, և պատասխանողը պատշաճ կարգով ծանուցվել են յուրաքանչյուր դատական նիստի վերաբերյալ: 2014 թվականի

դեկտեմբերի 11-ին հրավիրված դատական նիստին հայցվորը չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը, իսկ պատասխանողը չի ներկայացել, չեն հայտնել բացակայության վերաբերյալ պատճառներ, որի հիմքով, ելնելով հայցվող պահանջի էությունից և գործով կողմերի ներկայանալու անհրաժեշտությունից, մասնավորապես՝ 094/05-06-28 հեռախոսահամարի 2013 թվականի դեկտեմբեր և 2014 թվականի հունվար ամիսների ընթացքում օգտագործման արդյունքում պատասխանողի պարտավորությունը 20135 (քսան հազար հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ կազմելու, իսկ 094/07-06-28 հեռախոսահամարի, նույն ժամանակահատվածի դրությամբ՝ 596733 (հինգ հարյուր ինսունվեց հազար յոթ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ կազմելու հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացվելու նպատակով, գործի քննությունը հետաձգվել ու նշանակվել է 2015 թվականի փետրվարի 19-ին: 2015 թվականի փետրվարի 16-ին Լյովա Մերգեյի Մարտիրոսյանը դիմել է Դատարան՝ դատական նիստը տեղափոխելու և 2015 թվականի փետրվարի 20-ին նշանակելու միջնորդությամբ: 2015 թվականի փետրվարի 19-ի դատական նիստում Դատարանը քննարկել է միջնորդությունը և բավարարել մասնակի՝ դատական նիստը հետաձգել ու, ըստ ժամանակացույցի, նշանակել 2015 թվականի մարտի 27-ին: Նշյալ օրը հրավիրված դատական նիստին պատասխանողը չի ներկայացել՝ հեռախոսակապի միջոցով հայտնելով մարտական հերթապահությունում գտնվելու և իր ներկայանալու անհրաժեշտության մասին: Կողմերի ներկայությունն ապահովելու նպատակով դատական նիստը հետաձգվել ու նշանակվել է 2015 թվականի մայիսի 18-ին: Դատարանը նշյալ օրը բացելով դատական նիստը և հաշվի առնելով, որը կողմերը չեն հայտնել բացակայության վերաբերյալ հարգելի պատճառներ, գործը քննել է կողմերի բացակայությամբ, որի արդյունքում 2015 թվականի մայիսի 29-ի վճռով հայցն ամբողջությամբ բավարարել է:

4. ԸԻԴ 0473/05/13թ. վարչական գործ.

ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը 2013 թվականի նոյեմբերի 27-ին հայցադիմում է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի (Վարչական) Դատարան՝ «Առաքելյան եղբայրներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից 693300 ՀՀ դրամ՝ որպես հարկային և պարտադիր վճարների գծով պարտավորության գումար, ԼՂՀ պետական բյուջե գանձելու պահանջով: Դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 02-ի որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ, հարուցել վարչական գործ և դատաքննության նշանակել 2014 թվականի փետրվարի 10-ին: Նշանակված դատական նիստին կողմերի ներկայացուցիչները չեն ներկայացել, որի հիմքով, հաշվի առնելով, որ պատասխանողի կողմից դատաքննության վերաբերյալ պատշաճ ծանուցումը գործում բացակայում է, Դատարանը գործի քննությունը հետաձգել և նշանակել է 2014 թվականի ապրիլի 09-ին: Պատասխանողին 2013 թվականի դեկտեմբերի 03-ին ուղարկված նյութերը Դատարան են վերադարձվել 2014 թվականի մարտի 06-ին՝ «տեղափոխված» նշումով, որի հիմքով մարտի 10-ին հայցվորը տեղեկացվել է պատասխանողի հասցեի անճշտության

մասին: 2014 թվականի ապրիլի 09-ին նշանակված դատական նիստում Դատարանը քննության է առել հայցվորի՝ 2014 թվականի մարտի 20-ին ներկայացված միջնորդությունը՝ պատասխանողի նյութերը գրանցման վայրի համայնքի ղեկավարին ուղարկելու մասին, որի հետևանքով բավարարել է միջնորդությունը, որոշել նյութերն ուղարկել համայնքի ղեկավարին, իսկ գործի քննությունը հետաձգել ու նշանակել 2014 թվականի մայիսի 20-ին: ԼՂՀ Շահումյանի շրջանի Զուար համայնքի ղեկավարին 2014 թվականի ապրիլի 10-ին ուղարկվել են համապատասխան նյութերը, միաժամանակ համայնքի ղեկավարը ծանուցվել է մինչև 2014 թվականի մայիսի 20-ը նշանակված դատական նիստը հաղորդագրության ներկայացման անհրաժեշտության մասին: 2014 թվականի մայիսի 20-ին գործի քննությունը շարունակվել է, սակայն, հաշվի առնելով, որ ի պատասխան ԼՂՀ Շահումյանի շրջանի Զուար համայնքի ղեկավարը հաղորդագրություն չի ներկայացրել, ինչպես նաև նախագահող դատավորի ամենամյա արձակուրդ 04.06.2014թ-ից մեկնելու ու մինչև 16.07.2014թ. արձակուրդում գտնվելու հանգամանքը, գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 2014 թվականի օգոստոսի 11-ին, որի մասին ի լրումն ծանուցվել է նույն համայնքի ղեկավարին: 2014 թվականի օգոստոսի 11-ին, սեպտեմբերի 18-ին և նոյեմբերի 13-ին նույն հիմքով հետաձգվել է գործի քննությունը: 2014 թվականի դեկտեմբերի 24-ին Դատարան է մուտքագրվել փոստային ծանուցագիր, որում առկա էր նշում՝ Դատարանի կողմից ուղարկված նյութերը ԼՂՀ Շահումյանի շրջանի Զուար համայնքի ղեկավարի կողմից ստանալու մասին, որը հիմք ընդունելով Դատարանը 2015 թվականի հունվարի 15-ին նշանակված դատական նիստում համարել է որպես հաղորդագրություն ու, գործի քննությունը շարունակելով պատասխանողի բացակայությամբ, 2015 թվականի հունվարի 20-ի վճռով հայցն ամբողջությամբ բավարարել է: Ըստ Հանձնաժողովի թիվ ԷԿ-1-04/15թ. առ 11.08.2015թ. որոշման՝ գործի քննությունն անհարկի ձգձգվել է և ,որպես կանոն, չի ավարտվել մեկ դատական նիստով, այնինչ պատասխանողին ծանուցելու կամ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի պահանջով գործի քննության շարունակման թույլատրելիության նախապայման է հանդիսանում պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարին ծանուցելու և հաղորդագրության առկայությամբ գործի քննությունը շարունակելու փաստը, որի պահանջը պահպանվել է և մեկ դատական նիստով գործն ավարտելու կանոնի պահպանումը դարձել է անհնարին, իսկ ինչ վերաբերում է համապատասխան համայնքի ղեկավարի կողմից հաղորդագրության ներկայացման ժամանակահատվածի հարցին, ապա Դատարանն օժտված չէ գործով մասնակից չհանդիսացող համայնքի ղեկավարին, վերջինիս կողմից իր պարտականությունների կատարման հարցում, ազդելու լիազորությամբ:

5. ԸԻԴ 0062/05/14թ. վարչական գործ.

ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը 2014 թվականի հունվարի 15-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ «Հայր և որդի Պետրոսյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից 7240100 ՀՀ դրամ՝ որպես հարկային և պարտադիր վճարների գծով պարտավորության գումար,

ԼՂՀ պետական բյուջե գանձելու պահանջով: Դատարանի 2014 թվականի հունվարի 21-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, հարուցվել է վարչական գործ և դատաքննության նշանակվել 2015 թվականի ապրիլի 29-ին: Հանձնաժողովի թիվ ԷԿ-1-04/15թ. առ 11.08.2015թ. որոշման համաձայն՝ գործը դատաքննության է նշանակվել 29.04.2014թ.՝ 3 ամիս 8 օր հետո: Նշված հարցի կապակցությամբ հայտնում եմ, որ գործերի քննության նշանակման ժամկետները պայմանավորված են ժամանակացույցի հերթականության գործոնով՝ առանց տարբերակումների՝ շաբաթական միջին հաշվարկով 15 գործ նշանակվելու սկզբունքով, նաև՝ նշյալ գործը դատաքննության նշանակման ժամանակահատվածում քանակական հաշվարկով անավարտ 99 քաղաքացիական, վարչական, 14 սնանկության գործ վարույթում լինելու և ըստ հերթականության նշանակված լինելու հանգամանքներով: 2015 թվականի ապրիլի 29-ին նշանակված դատական նիստի վայրի և ժամանակի մասին կողմերը պատշաճ ծանուցվել են, սակայն չեն ապահովել ներկայացուցիչների մասնակցությունը, որի հիմքով, կողմերի ներկայությամբ գործի քննության համար նշանակություն ունեցող փաստեր պարզելու անհրաժեշտությամբ պայմանավորված, մասնավորապես՝ հարկային մարմնի ներկայացուցչի դիրքորոշմամբ՝ պարտավորությունների ծագման հիմքերի ու ըստ հարկատեսակների, վճարների տեսակների, լրացուցիչ տույժերի հաշվարկման, իսկ պատասխանողի՝ պարտավորության, ընդունման, կատարման, հաշվարկների վերաբերյալ համաձայնության հարցերի պարզման նպատակով նիստը հետաձգվել ու նշանակվել է 2014 թվականի օգոստոսի 28-ին: Նշված օրը պատասխանողը չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը, իսկ հայցվորի ներկայացուցիչը ներկայացել է, ներկայացնելով պարտավորությունները հիմնավորող ապացույցներ, մասնավորապես՝ պատասխանողի նախաձեռնությամբ ներկայացված հաշվարկ-հաշվետվություններ, իսկ լրացուցիչ պարտավորության՝ տույժերի հաշվարկման վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված միջնորդել է հետաձգել և հնարավորություն ընձեռնել այդ մասով լրացուցիչ տեղեկություններ ներկայացնելու, ինչը նպաստել է միջնորդության բավարարման հետևանքով գործի քննության հետաձգմանը և 2014 թվականի հոկտեմբերի 13-ին նշանակմանը: 2014 թվականի հոկտեմբերի 13-ի դատական նիստին կողմերը չեն ապահովել ներկայացուցիչների մասնակցությունը, որի կապակցությամբ, հաշվի առնելով գործով քննարկվող հարցերին գնահատական տալու համար նշանակություն ունեցող ապացույցների ներկայացման անհրաժեշտությունը (հայցադիմումը պարտավորությունների ծագման մասին տեղեկությունները թերի ներառելու պատճառով), Դատարանը հետաձգել է գործի քննությունն ու նշանակել 2014 թվականի դեկտեմբերի 09-ին, այնուհետև, նույն հիմքով՝ 2015 թվականի հունվարի 23-ին և մարտի 26-ին: 2015 թվականի մարտի 26-ին նշանակված դատական նիստին ներկայացել է հայցվորի ներկայացուցիչը, ով պարզաբանումներ է տվել պատասխանողի նկատմամբ հաշվարկված պարտավորությունների ծագման հիմքերի,

նան՝ տույժերի մասին, որի արդյունքում Դատարանը գործով 2015 թվականի մարտի 27-ին կայացրած վճռով հայցն ամբողջությամբ բավարարել է:

6. ԸԻԴ 0122/05/14թ. վարչական գործ.

ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը 2014 թվականի փետրվարի 10-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ «Ալրադաց» փակ բաժնետիրական ընկերությունից 555600 ՀՀ դրամ՝ որպես հարկային և պարտադիր վճարների գծով պարտավորության գումար, ԼՂՀ պետական բյուջե գանձելու պահանջով: Դատարանի 2014 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, հարուցվել է վարչական գործ և նույն որոշմամբ դատաքննության է նշանակվել 2014 թվականի մայիսի 27-ին: Հանձնաժողովի թիվ ԷԿ-1-04/15թ. առ 11.08.2015թ. որոշման համաձայն՝ գործը դատաքննության է նշանակվել 3 ամիս 10 օր հետո: Նշված հարցը կրկին պայմանավորված է ժամանակացույցի հերթականության հետ, նան՝ դատաքննության նշանակման ժամանակահատվածում քանակական հաշվարկով անավարտ 86 քաղաքացիական, վարչական, 14 սնանկության գործ վարույթում լինելու և ըստ հերթականության նշանակված լինելու փաստերով: «Ալրադաց» փակ բաժնետիրական ընկերությանն ուղարկված նյութերը, հասցեի անճշտության հիմքով, 2014 թվականի մարտի 27-ին վերադարձվել են Դատարան, որի մասին 2014 թվականի մարտի 31-ի գրությամբ հայցվորը ծանուցվել է: 2014 թվականի ապրիլի 04-ին հարկային մարմինը ներկայացրել է միջնորդություն՝ նյութերը պատասխանողի գրանցման վայրի համայնքի ղեկավարին ուղարկելու բովանդակությամբ: Նախագահող դատավորի օգնականի 2014 թվականի ապրիլի 08-ի գրությամբ ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետը ծանուցվել է՝ պատասխանողի հասցեի անճշտության և հաղորդագրություն՝ նյութերը ստանալու փաստը հավաստող մակագրությամբ, ներկայացվելու անհրաժեշտության մասին: ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետը 2015 թվականի ապրիլի 30-ին ներկայացրել է հաղորդագրություն: 2015 թվականի մայիսի 27-ին նշանակված դատական նիստում նախագահող դատավորը հաշվի առնելով, որ գործի նյութերով պատասխանողի պետական ռեգիստրում նշված հասցեն հանդիսանում է ԼՂՀ Ասկերանի շրջանի Բերքաձոր համայնքը, հայցվորի ներկայացուցչի միջնորդության հիմքով նյութերը 2014 թվականի մայիսի 30-ին ուղարկել է նշված համայնքի ղեկավարին՝ հաղորդագրություն ներկայացնելու խնդրանքով, իսկ գործի քննությունը, հաշվի առնելով 04.06.2014թ.-16.07.2014թթ. ընկած ժամանակահատվածում ամենամյա արձակուրդում գտնվելու հանգամանքը, նշանակել է 25.07.2014թ.: ԼՂՀ Ասկերանի շրջանի Բերքաձոր համայնքի ղեկավարին նյութերը հանձնվելու մասին վերջինիս ստորագրությամբ փոստային ծանուցագիրը Դատարան է մուտքագրվել 2014 թվականի հունիսի 23-ին: 2014 թվականի հուլիսի 25-ին, օգոստոսի 07-ին, սեպտեմբերի 15-ին (ոչ աշխատանքային օր ԼՂՀ կառավարության որոշմամբ սահմանվելու կապակցությամբ տեղափոխվելու արդյունքում՝ սեպտեմբերի 27-ին), նոյեմբերի 27-ին, 2015 թվականի հունվարի 22-ին նշանակված դատական նիստերին հայցվորը չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը, իսկ ԼՂՀ Ասկերանի շրջանի

Բերքաձոր համայնքի ղեկավարի կողմից, ի պատասխան Դատարանի 2014 թվականի մայիսի 30-ի և ի լրումն՝ 2014 թվականի հուլիսի 29-ի, օգոստոսի 11-ի, սեպտեմբերի 03-ի, սեպտեմբերի 30-ի, նոյեմբերի 28-ի գրությունների, ծանուցումը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն չի ներկայացվել, որի հիմքով, հաշվի առնելով, որ վերջինիս ծանուցումը՝ ԼՂՀ Ասկերանի շրջանի Բերքաձոր համայնքի ղեկավարի կողմից ուղարկված՝ պատասխանողին հասցեագրված ծանուցագիրը ստորագրությամբ ստանալու մասին փոստային ծանուցումը Դատարան է մուտքագրվել 2014 թվականի դեկտեմբերի 24-ին, Դատարանը հերթական դատական նիստում՝ 2015 թվականի հունվարի 22-ին, հայցվորի ներկայացուցչի հետ քննության է առել փոստային ծանուցագիրը հաղորդագրություն համարելու հարցը և արդյունքում՝ նույն օրը քննել է վարչական գործը, իսկ հունվարի 28-ի վճռով հայցն ամբողջությամբ բավարարվել է:

7. ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործ.

ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանը 2014 թվականի ապրիլի 18-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ Գազիկ Ռադիկի Միքայելյանից 50000 ՀՀ դրամ գանձելու մասին վճարման կարգադրություն արձակելու պահանջի վերաբերյալ: Դատարանը 2014 թվականի ապրիլի 30-ին արձակել է վճարման կարգադրություն: 2014 թվականի մայիսի 29-ին ներկայացվել է հակընդդեմ հայցադիմում: Դատարանի 2014 թվականի հունիսի 03-ի որոշմամբ վճարման կարգադրությունը վերացրել է, անցում է կատարվել հայցային վարույթի, հակընդդեմ հայցադիմումը վերադարձվել է, իսկ վարչական գործը, հաշվի առնելով նախագահող դատավորի ամենամյա արձակուրդի ժամանակահատվածը, նշանակվել է դատական քննության 2014 թվականի օգոստոսի 25-ին: 2014 թվականի ապրիլի 25-ին Դատարանը վարույթ է ընդունել հիշյալ գործով պատասխանող Գազիկ Ռադիկի Միքայելյանի կողմից 2014 թվականի ապրիլի 18-ին ներկայացված հայցադիմումը՝ Ստեփանակերտի քաղաքապետարանին կից վարչական հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի թիվ 14 որոշումը՝ ոչ սահմանված տեղում բուսական ծագում ունեցող գյուղատնտեսական արտադրանքի առևտուր իրականացվելու հիմքով 50000 ՀՀ դրամ տուգանքի տեսքով վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջով (ԸԻԴ 0204/05/2014), որի դատաքննությունը նշանակվել է 2014 թվականի օգոստոսի 21-ին: Քանի որ ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործի քննությունը պայմանավորված էր ԸԻԴ 0204/05/2014 վարչական գործով վիճարկված վարչական ակտի իրավաչափության գնահատման իրավական խնդրով, հետևաբար՝ 2014 թվականի օգոստոսի 25-ին նշանակված դատական նիստը չի կայացել՝ կողմերի բացակայության պատճառով՝ կողմերի կողմից ԸԻԴ 0204/05/2014 գործով վարչական ակտի իրավաչափության մասով կայացվելիք վերջնական դատական ակտը ներկայացվելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Հերթական դատական նիստին՝ նշանակված 2014 թվականի հոկտեմբերի 27-ին, ներկայացել է միայն պատասխանողի ներկայացուցիչը, որը կողմերի բացակայության վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Գտնում եմ, որ կողմերի ներկայությունը պարտադիր է, քանի որ վարչական ակտն ուժի մեջ լինելու հարցն

ենթակա է ապացուցման հայցվորի կողմից, իսկ պատասխանողը կարող է ներկայացնել իր ապացույցները, որոնք հերքում են պահանջի իրավունքը>>: Դատարանը կողմերի ներկայությունն ապահովելու նպատակով, բավարար դիտելով պատասխանողի ներկայացուցչի հիմնավորումները և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով ու ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, գործի քննությունը հետաձգել և նշանակել է 2014 թվականի դեկտեմբերի 15-ին: ԸԻԴ 0204/05/2014 վարչական գործով 2014 թվականի նոյեմբերի 25-ին կայացված վճռով ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանին կից վարչական հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի թիվ 14 որոշումը՝ Գագիկ Ռադիկի Միքայելյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին, ճանաչվել է անվավեր: 2014 թվականի դեկտեմբերի 15-ին ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործով նշանակված դատական նիստը, կողմերի բացակայության և վարչական ակտի իրավաչափության մասով լրացուցիչ ապացույցներ ներկայացվելու հիմքերով, նաև՝ ԸԻԴ 0204/05/2014 վարչական գործով վերջնական դատական ակտ կայացվելու նպատակով գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 2015 թվականի փետրվարի 09-ին, այնուհետև՝ նույն հիմքերով մարտի 24-ին: 2015 թվականի մարտի 24-ին գործով պատասխանող Գագիկ Ռադիկի Միքայելյանը դիմում է ներկայացրել Դատարան՝ կցելով 0204/05/2014 վարչական գործով 2014 թվականի նոյեմբերի 25-ին կայացված վճիռը՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի աշխատակազմի ղեկավարի 2015 թվականի մարտի 24-ի՝ վճիռը վերաքննության կարգով բողոքարկված չլինելու գրառմամբ: 2015 թվականի մարտի 24-ի դատական նիստում Դատարանը քննության է առել ԸԻԴ 0280/05/14թ. վարչական գործը, ապացույցների հետ մեկտեղ ուսումնասիրել նաև ԸԻԴ 0204/05/2014 վարչական գործով վերջնական դատական ակտը և 2015 թվականի ապրիլի 03-ի վճռով մերժել ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի հայցը:

Ի լրումն բացատրությամբ նշված՝ գործերի քննության ժամկետների մասին հանգամանքների, որպես նախազահող դատավոր, հայտնում եմ, որ հիշյալ գործերը վերաքննության կարգով չեն բողոքարկվել, նիստերի նշանակումը կատարվել է ըստ ժամանակացույցի՝ հերթականության սկզբունքով, գործերով անհարկի ձգձգում տեղի չի ունեցել՝ գործերով դատական նիստերի նշանակումները յուրաքանչյուր գործի քննություն պատշաճ իրականացվելու, վեճը նույն գործի շրջանակում ավարտելու և լրացուցիչ հետևանքներ չունենալու փաստերով պայմանավորված լինելու հիմքերով>>:

2015թ. սեպտեմբերի 28-ին Արդարադատության խորհրդի նիստում դատավոր Կ.Մելքունյանը վիճարկել է կարգապահական խախտումների փաստերը և պնդել է Հանձնաժողովին տված բացատրության փաստարկները:

4. Կարգապահական պատասխանատվության հարցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Արդարադատության խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետևյալ փաստերը՝

1. 2015թ. հուլիսի 24-ին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի նախագահ Ա.Թադևոսյանն եզրակացություն է ներկայացրել՝ գործի քննության ժամկետների խախտման վերաբերյալ:

2. Դատարանի վարույթում գտնված թիվ 1471/02/2014թ. քաղաքացիական գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ և դատաքննության է նշանակվել 08.10.2014թ.: 08.10.2014թ. սկսած գործը 2 ամիս 5 օր ժամկետով անհիմն ձգձգվել է, որ պայմանավորված էր դատավոր Կ.Մելքումյանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հանգամանքով:

3. Դատարանի վարույթում գտնված թիվ 1404/02/2014թ. քաղաքացիական գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ, հարուցվել քաղաքացիական գործ և դատաքննության նշանակվել 06.10.2014թ.: Դատարանի դատավոր Կ.Մելքումյանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի խախտումը հանգեցրել է տվյալ գործի անհարկի ձգձգմանը շուրջ 4 ամսով:

4. Դատարանի վարույթում գտնված թիվ 1858/02/2014թ. քաղաքացիական և 0473/05/13թ. վարչական գործերով Դատարանի նախագահ Ա.Թադևոսյանի եզրակացությունում նշված ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստերը կարգապահական վարույթի նյութերով չեն հաստատվել:

5. Դատարանի վարույթում գտնված թիվ 0280/05/14թ. վարչական գործի վարույթը, դատավարական նորմերի խախտումներով պայմանավորված, անհարկի ձգձգվել է 43 օրով:

6. Դատարանի վարույթում գտնված թիվ 0062/05/14թ. վարչական գործով հայցադիմումը վարույթ է ընդունվել 21.01.14թ. և դատաքննության նշանակվել 29.04.14թ.: Թիվ 0062/05/14թ. վարչական գործի քննությունը 5 անգամ հետաձգվել է գործին մասնակցող անձանց ներկայությունը ապահովելու նպատակով, վերջիններիս կողմից պատշաճ ծանուցված լինելու պարագայում և ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հանգամանքով պայմանավորված շուրջ 10 ամիս ժամկետով ձգձգվել է գործի քննությունը:

7. Թիվ 0122/05/14թ. վարչական գործով հայցադիմումը վարույթ է ընդունվել 17.02.14թ. և դատաքննության նշանակվել 27.05.14թ.: Սույն գործով դատավոր Կ.Մելքումյանը թույլ տալով դատավարական նորմերի խախտումներ՝ անհարկի ձգձգել է գործի քննությունը շուրջ 8 ամիս:

5.Արդարադատության խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննարկելով Դատարանի դատավոր Կ.Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով Հանձնաժողովի անդամ Ռ.Ջհանգիրյանի զեկույցը, դատավորի բացատրությունն, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Արդարադատության խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ և 45-րդ համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ԼՂՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

ԼՂՀ դատական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում:

ԼՂՀ դատական օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ <<Դատական իշխանություն իրականացնելիս դատավորը պարտավոր է (...) քննությունն իրականացնել ողջամիտ ժամկետներում՝ խուսափելով անհարկի ձգձգումներից (...)>>:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար, իսկ նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ՝ դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե այն չի կարող քննվել տվյալ նիստում, մասնավորապես՝ գործին մասնակցող անձանցից որևէ մեկի, վկանների փորձագետների, թարգմանիչների բացակայության պատճառով:

<<<<Դատավորի վարքագծի կանոնները>> սահմանելու մասին>> ԼՂՀ դատավորների ընդհանուր ժողովի 22.06.2010թ. թիվ02-Ն որոշման (այսուհետ՝ <<Վարքագծի կանոններ>>) 9-րդ կանոնի համաձայն՝ դատավորը պարտավոր է

բարեխղճորեն կատարել իր մասնագիտական պարտականությունները և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները գործերի և նյութերի ողջամիտ ժամկետում քննության համար, որպեսզի կասկածներ չառաջացնի արդարադատության արդյունավետության նկատմամբ:

Արդարադատության խորհուրդն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ 1997 թվականի հուլիսի 11-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ընդունած DH (97) 336 հռչակագրում ամրագրվել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումը լուրջ վտանգ է ներկայացնում մասնավորապես իրավունքի գերակայության համար»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Էյչն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճռում նշել է, որ «...Դատարանն անտեղյակ չէ այն դժվարությունների մասին, որոնք առաջանում են տարբեր գործոնների արդյունքում և երբեմն կարող են ազգային դատարանների կողմից գործերի հետաձգման պատճառ հանդիսանալ: Այդուհանդերձ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է գործերը քննել ողջամիտ ժամկետում, որպեսզի ապահովվի արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, ինչը կարող է խափանել արդարադատության արդյունավետությունն ու վստահությունը վերջինիս նկատմամբ» (տես Էյչն H.) ընդդեմ Ֆրանսիայի, 1989թ. հոկտեմբերի 24, գանգատ թիվ 10073/82, կետ 58):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեջբերված դիրքորոշումից երևում է, որ գործի ողջամիտ ժամկետում քննությունը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի իմաստով հանդիսանում է անձի արդար դատաքննության իրավունքի տարր, որը դատարանին պարտավորեցնում է բոլոր դեպքերում գործը քննել և լուծել հնարավորինս սեղմ ժամկետներում՝ խուսափելով անհարկի ձգձգումներից:

Անդրադառնալով դատաքննության տևողության ողջամտությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն պետք է գնահատվի՝ հաշվի առնելով գործի հետևյալ հանգամանքները՝ տվյալ դատական գործի բարդությունը, դիմողի և համապատասխան մարմինների վարքագիծը, ինչպես նաև դիմողի համար այն արժեքի կարևորությունը, որին առնչվում է դատաքննությունը (տես Հումենն ընդդեմ Լեհաստանի, 1999թ. հոկտեմբերի 15, գանգատ թիվ 26614/95, կետ 60):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեջբերված դիրքորոշումից երևում է, որ Եվրոպական դատարանը սահմանել է գործի քննության ժամկետի ողջամտության հետևյալ չափանիշները՝

- գործի բարդությունը,
- դիմողի համար ողջամիտ ժամկետի չափազանցման հետևանքները,
- համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը,
- դիմողի սեփական վարքագիծը:

Վերոգրյալների հաշվառմամբ, անդրադառնալով սույն վարույթի նյութերին, Խորհուրդն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հանգամանքով պայմանավորված 2 ամիս 5 օր ժամկետով ԸԻԴ 1471/02/2014թ. քաղաքացիական գործի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ պայմանավորված շուրջ 4 ամիս ժամկետով ԸԻԴ 1404/02/2014թ. քաղաքացիական գործի, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հանգամանքով պայմանավորված շուրջ 10 ամիս ժամկետով ԸԻԴ 0062/05/2014թ. վարչական գործի, նույն հոդվածի և 62-րդ, 75-րդ հոդվածների պահանջների խախտման հիմքով պայմանավորված շուրջ 8 ամիս, ԸԻԴ 0122/05/2014թ. վարչական գործի, 43 օր ժամկետով և ԸԻԴ 0280/05/2014թ. վարչական գործի քննության անհարկի ձգձգումները հանգեցրել են տվյալ գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտմանը: Մասնավորապես, տվյալ գործերը չեն առանձնանում հաստատման ենթակա առանձնահատուկ փաստերով, չկար նոր անձանց ներգրավման անհրաժեշտություն, վկաների հարցաքննության, փորձաքննության նշանակման անհրաժեշտություն, իսկ իրավական ասպեկտի տեսանկյունից պարզ է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառելի իրավունքը, ուստի նշված գործերը իրենց բնույթով չեն դասվում բարդ գործերի շարքին: Պետք է արձանագրել նաև, այն, որ դիմողի /հայցվորի/ համար ողջամիտ ժամկետի չպահպանումը հանգեցրել է իր հայցվող գույքային իրավունքի ժամանակին իրացման հնարավորության սահմանափակմանը, որի արդյունքում իրավունքների դատական պաշտպանության եղանակը դառնում է անարդյունավետ:

Արդարադատության խորհուրդը գտնում է, որ վերոշարադրված դատավարական նորմերի խախտումները, դրանցով պայմանավորված գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտումները ակնհայտ են, քանի որ դրանց առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով, իսկ դրանց պարբերականությունը հեղինակագրկում է արդարադատությունը և դատավորի բարձր կոչումը:

Հետևաբար, Արդարադատության խորհուրդն արձանագրում է, որ Դատարանի դատավոր Կ.Մելքումյանի կողմից խախտվել է ԼՂՀ ներպետական և միջազգային օրենսդրությամբ սահմանված՝ գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման պահանջը:

Այսպիսով, Արդարադատության խորհուրդը գտնում է, որ Դատարանը, չպահպանելով իր վարույթում գտնվող գործի քննության ողջամիտ ժամկետները, թույլ է տվել ԼՂՀ Սահմանադրության 44-րդ և 45-րդ հոդվածների, <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, նույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 60-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 109-րդ հոդվածի 2-րդ մասի, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի

62-րդ հոդվածի 5-րդ մասի, 81-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերի, 95-րդ հոդվածի 2-րդ մասի ակնհայտ և կոպիտ, ինչպես նաև «ԼՂՀ դատավորի վարքագծի կանոններ» 9-րդ կանոնի պահանջների կոպիտ խախտումներ, որոնք ԼՂՀ դատական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք են հանդիսանում:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ դատական օրենսգրքի 81-րդ, 109-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 111-րդ հոդվածով, Արդարադատության խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը բավարարել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանի դատավոր **Կարեն Մելքումյանին** հայտարարել նախազգուշացում:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

_____ **Լ.ԱՍՐՅԱՆ**

_____ **Մ.ԱՎԱՆԵՍՅԱՆ**

_____ **Ս.ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**

_____ **Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

_____ **Ա.ԼԱԶԱՐՅԱՆ**

_____ **Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

_____ **Կ.ՍԱՂՅԱՆ**

_____ **Մ.ՍԱՏԱՐՅԱՆ**

_____ **Մ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**